

Գլուխ 27

«Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգը

Հոդված 201 «Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի բովանդակությունը եւ կիրառումը

1. «Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգն օտարերկրյա ապրանքների եւ Միության ապրանքների նկատմամբ կիրառվող մաքսային ընթացակարգ է, որի համաձայն այդպիսի ապրանքները տեղավորվում եւ օգտագործվում են ԱՏԳ տարածքի կամ դրա մի մասի սահմաններում՝ առանց մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերի վճարման՝ այդպիսի մաքսային ընթացակարգով ապրանքների ձեւակերպման եւ այդպիսի մաքսային ընթացակարգին համապատասխան դրանց օգտագործման պայմանների կատարմամբ:

2. «Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպվում են այն ապրանքները, որոնք նախատեսված են ԱՏԳ տարածքում ԱՏԳ ռեզիդենտների (մասնակիցների, սուբյեկտների) կողմից տեղավորման եւ (կամ) օգտագործման համար ԱՏԳ ռեզիդենտների (մասնակիցների, սուբյեկտների) կողմից ձեռնարկատիրական եւ այլ գործունեության իրականացման նպատակով՝ «ԱՏԳ տարածքում գործունեության իրականացման (վարման) մասին» համաձայնագրին (պայմանագրին) («ԱՏԳ-ում գործունեության պայմանների մասին» պայմանագրին, ներդրումային հայտարարագրին, ձեռնարկատիրական ծրագրին) համապատասխան, եթե անդամ պետության օրենսդրությամբ այլ բան սահմանված չէ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպվող ապրանքների նկատմամբ այդպիսի անդամ պետության տարածքում ստեղծված առանձին ԱՏԳ տարածքում դրանց տեղավորման եւ (կամ) օգտագործման համար:

Միության ապրանքներ հանդիսացող սույն կետի առաջին պարբերության մեջ նշված ապրանքները, բացառությամբ նավահանգստային ԱՏԳ կամ լոգիստիկ ԱՏԳ տարածքում տեղավորման եւ (կամ) օգտագործման համար ներմուծվող ապրանքների, ձեւակերպվում են «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ԱՏԳ ռեզիդենտի (մասնակցի, սուբյեկտի) ընտրությամբ, եթե այն անդամ պետության օրենսդրությամբ, որի տարածքում ստեղծվել է ԱՏԳ-ն, սահմանված չէ, որ Միության այդ ապրանքները ենթակա են պարտադիր ձեւակերպման «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով:

3. ԱՏԳ տարածքում գտնվող եւ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով չձեւակերպված Միության ապրանքների նկատմամբ թույլատրվում է ցանկացած՝ այդ թվում սույն Օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված գործառնությունների իրականացում:

4. «Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով կարող են ձեւակերպվել նավահանգստային ԱՏԳ կամ լոգիստիկ ԱՏԳ տարածքում այն անձանց կողմից տեղավորման համար նախատեսված ապրանքները, որոնք չեն հանդիսանում նավահանգստային ԱՏԳ կամ լոգիստիկ ԱՏԳ ռեզիդենտ (մասնակից, սուբյեկտ), եւ որոնք նավահանգստային ԱՏԳ կամ լոգիստիկ ԱՏԳ ռեզիդենտների (մասնակիցների, սուբյեկտների) հետ պայմանագիր են կնքել ապրանքների պահեստավորման (պահման), ապրանքների բեռնման (բեռնաթափման) եւ ապրանքների պահման, պահպանվածության ապահովման, ինչպես նաեւ ապրանքները փոխադրման (տրանսպորտային փոխադրման) նախապատրաստելու հետ կապված՝ ներառյալ խմբաքանակի մասնատման, առաքումների կազմավորման, տեսակավորման, փաթեթավորման, վերափաթեթավորման, մակնշման հետ կապված այլ բեռնային գործողությունների առնչությամբ ծառայությունների մատուցման մասին (հետագայում սույն գլխում՝ ծառայությունների մատուցման մասին պայմանագիր)՝ պայմանով, որ նշված ծառայությունները մատուցելիս ապրանքների հետ կատարվող գործառնությունները չեն փոփոխում ապրանքների բնութագրերը, որոնք կապված են ծածկագրի փոփոխության հետ՝ Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին համապատասխան:

5. «Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով չեն ձեւակերպվում այն տրանսպորտային միջոցները, որոնք իրականացնում են բեռների, ուղեւորների եւ (կամ) ուղեբեռի փոխադրում ԱՏԳ տարածք եւ (կամ) իրականացնում են այդպիսի ԱՏԳ տարածքից ապրանքների, ինչպէս նաեւ այդպիսի տրանսպորտային միջոցների վրա գտնվող պաշարների փոխադրում:

6. «Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքները պահպանում են օտարերկրյա ապրանքների կարգավիճակը, իսկ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված Միության ապրանքները պահպանում են Միության ապրանքների կարգավիճակը:

«Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված Միության ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքները, ինչպէս նաեւ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված Միության ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքները եւ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով չձեւակերպված Միության ապրանքները ձեռք են բերում Միության ապրանքների կարգավիճակ:

«Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքները, ինչպէս նաեւ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքներից եւ Միության ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքները (այսուհետ սույն գլխում՝ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքներ), ձեռք են բերում օտարերկրյա ապրանքների կարգավիճակ՝ հաշվի առնելով սույն կետի չորրորդ պարբերությունը:

Այն դեպքում, երբ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքներն արտահանվում են Միության մաքսային տարածքից, այդպիսի ապրանքների կարգավիճակը որոշվում է սույն Օրենսգրքի 210-րդ հոդվածին համապատասխան:

Այն դեպքում, երբ ԱՏԳ տարածքում գտնվող ապրանքները չեն կարող նույնականացվել մաքսային մարմնի կողմից որպես ապրանքներ, որոնք գտնվել են ԱՏԳ տարածքում նախքան դրա ստեղծումը, կամ որպես ԱՏԳ տարածք ներմուծված կամ ԱՏԳ տարածքում պատրաստված (ստացված) ապրանքներ, ապա այդպիսի ապրանքները, ԱՏԳ տարածքից դրանց արտահանման նպատակներից ելնելով, Միության մաքսային տարածքի սահմաններից դուրս դիտարկվում են որպես Միության ապրանքներ, իսկ այլ նպատակների դեպքում՝ որպես Միության մաքսային տարածք ներմուծվող օտարերկրյա ապրանքներ:

Սույն կետի հինգերորդ պարբերության մեջ նշված՝ ԱՏԳ տարածքից նախկինում արտահանված ապրանքները Միության մաքսային տարածք ներմուծելու դեպքում այդպիսի ապրանքների նկատմամբ Միության մաքսային տարածքի սահմաններից դուրս չի կիրառվում «վերաներմուծում» մաքսային ընթացակարգը:

«Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքները, որոնց վրա տարածվում են ներքին շուկայի պաշտպանության միջոցները, պետք է նույնականացված լինեն «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքներում, այդպիսի ապրանքները ԱՏԳ տարածքից Միության մաքսային տարածքի մնացած մաս արտահանելու համար:

Այն դեպքում, եթե «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքները, որոնց վրա տարածվում են ներքին շուկայի պաշտպանության միջոցները, օգտագործվել են «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքներ պատրաստելու համար, սակայն չեն կարող նույնականացվել այդպիսի ապրանքներում, ապա «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված այդպիսի օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքները պետք է արտահանվեն Միության մաքսային տարածքից:

7. Հանձնաժողովն իրավասու է սահմանել ապրանքների եւ (կամ) ապրանքների կատեգորիաների ցանկ, որոնք ենթակա չեն ձեւակերպման «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով:

Անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան՝ կարող է սահմանվել այն ապրանքների եւ (կամ) ապրանքների կատեգորիաների ցանկը, որոնք ենթակա չեն այդ պետությունների տարածքներում ստեղծված (ստեղծվող) ԱՏԳ-ներում «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպման:

8. Այն մասերը, հանգույցները, ագրեգատները, որոնք մաքսային մարմնի կողմից կարող են նույնականացվել որպես «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքների կազմի մեջ մտնող (մտած) ապրանքներ ազատ մաքսային գոտու տարածքից արտահանման նպատակով դիտարկվում են որպես «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքներ, եւ դրանց նկատմամբ կիրառվում են սույն Օրենսգրքի դրույթները:

9. Անդամ պետության օրենսդրությամբ կարող է սահմանվել, որ սույն Օրենսգրքի 205-րդ հոդվածի 3-րդ կետը, 207-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին եւ 2-րդ ենթակետերը չեն կիրառվում այդպիսի անդամ պետության տարածքում ստեղծված՝ այնպիսի ԱՏԳ-ների համար, որոնց սահմաններն ամբողջությամբ կամ մասամբ համընկնում են Միության մաքսային սահմանի հատվածների հետ:

Հոդված 202. «Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ապրանքների ձեւակերպման եւ այդպիսի մաքսային ընթացակարգին համապատասխան դրանց օգտագործման պայմանները

1. «Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ապրանքների ձեւակերպման պայմաններն են՝

1) ապրանքները նախատեսված են ԱՏԳ տարածքում ԱՏԳ ռեզիդենտների (մասնակիցների, սուբյեկտների) կողմից տեղավորման եւ (կամ) օգտագործման համար՝ «ԱՏԳ տարածքում գործունեության իրականացման (վարման) մասին»

համաձայնագրին (պայմանագրին) («ԱՏԳ-ում գործունեության պայմանների մասին» պայմանագրին, ներդրումային հայտարարագրին, ձեռնարկատիրական ծրագրին) համապատասխան ԱՏԳ ռեզիդենտների (մասնակիցների, սուբյեկտների) կողմից ձեռնարկատիրական եւ այլ գործունեության իրականացման նպատակով, եթե անդամ պետության օրենսդրությամբ այլ բան սահմանված չէ այդպիսի անդամ պետության տարածքում ստեղծված առանձին ԱՏԳ-ների տարածքում տեղավորման եւ (կամ) օգտագործման համար՝ սույն Օրենսգրքի 201-րդ հոդվածի 2-րդ կետի առաջին պարբերությանը համապատասխան:

2) ապրանքները նախատեսված են նավահանգստային ԱՏԳ կամ լոգիստիկ ԱՏԳ տարածքում տեղավորման համար այն անձանց կողմից, որոնք նավահանգստային ԱՏԳ կամ լոգիստիկ ԱՏԳ ռեզիդենտներ (մասնակիցներ, սուբյեկտներ) չեն եւ որոնք նավահանգստային ԱՏԳ կամ լոգիստիկ ԱՏԳ ռեզիդենտների (մասնակիցների, սուբյեկտների) հետ կնքել են ծառայությունների մատուցման մասին պայմանագիր՝ պայմանով, որ նշված ծառայությունները մատուցելիս ապրանքների հետ կատարվող գործառնությունները չեն փոփոխում ապրանքների բնութագրերը, որոնք կապված են ծածկագրի փոփոխության հետ՝ Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին համապատասխան:

3) օտարերկրյա ապրանքների նկատմամբ արգելքների եւ սահմանափակումների պահպանումը՝ սույն Օրենսգրքի 7-րդ հոդվածին համապատասխան:

2. «Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպվող ապրանքների հայտարարատուներ կարող են հանդես գալ անձինք, որոնք հանդիսանում են այն ԱՏԳ ռեզիդենտներ (մասնակիցներ, սուբյեկտներ), որի տարածքում պետք է տեղավորվեն այդ ապրանքները, իսկ սույն կետի երկրորդ եւ երրորդ պարբերություններով նախատեսված դեպքերում՝ նաեւ սույն կետի երկրորդ պարբերությունում նշված կամ Հանձնաժողովի կողմից՝ սույն կետի երրորդ պարբերությանը համապատասխան որոշված այլ անձինք:

Որպես Միության մաքսային տարածքի մնացած մաս կամ դրա սահմաններից դուրս նավահանգստային ԱՏԳ կամ լոգիստիկ ԱՏԳ տարածք ներմուծվող կամ

նավահանգստային ԱՏԳ կամ լոգիստիկ ԱՏԳ տարածքից արտահանվող՝ սույն հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետում նշված ապրանքների հայտարարատուներ կարող են հանդես գալ սույն Օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետում եւ 2-րդ ենթակետի երրորդ պարբերության մեջ նշված անձինք՝ ծառայությունների մատուցման մասին պայմանագրի հիման վրա:

Հանձնաժողովն իրավունք ունի որոշել ԱՏԳ ռեզիդենտ (մասնակից, սուբյեկտ) չհանդիսացող՝ անդամ պետությունների անձանց եւ այն դեպքերը, երբ այդ անձինք կարող են հանդես գալ որպես «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպվող ապրանքների հայտարարատուներ:

3. «Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգին համապատասխան ապրանքների օգտագործման պայմաններն են՝

1) «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպվող ապրանքների տեղավորումը եւ դրանց գտնվելը ԱՏԳ տարածքում՝ ԱՏԳ գործունեության ժամկետի ընթացքում կամ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի՝ ԱՏԳ տարածքում կիրառման ժամկետի ընթացքում կամ նախքան անձի կողմից ԱՏԳ ռեզիդենտի (մասնակցի, սուբյեկտի) կարգավիճակը կորցնելը՝ հաշվի առնելով սույն Օրենսգրքի 205-րդ հոդվածի 4-րդ կետը.

2) «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպվող ապրանքների օգտագործումը ԱՏԳ տարածքում՝

«ԱՏԳ տարածքում գործունեության իրականացման (վարման) մասին» համաձայնագրին (պայմանագրին) («ԱՏԳ-ում գործունեության պայմանների մասին» պայմանագրին, ներդրումային հայտարարագրին, ձեռնարկատիրական ծրագրին) համապատասխան կամ սույն Օրենսգրքի 201-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ անդամ պետության օրենսդրությամբ սահմանված նպատակներին համապատասխան.

նավահանգստային ԱՏԳ կամ լոգիստիկ ԱՏԳ ռեզիդենտ (մասնակից, սուբյեկտ) չհանդիսացող անձի եւ նավահանգստային ԱՏԳ կամ լոգիստիկ ԱՏԳ ռեզիդենտ (մասնակից, սուբյեկտ) հանդիսացող անձի միջեւ կնքված ծառայությունների մատուցման մասին պայմանագրին համապատասխան, եթե ապրանքները

ձեւակերպվում են «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգին համապատասխան նավահանգստային ԱՏԳ կամ լոգիստիկ ԱՏԳ տարածքում այդպիսի ծառայությունների մատուցման համար.

3) «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպվող ապրանքների տեղավորումը եւ օգտագործումը ԱՏԳ տարածքում, որոնք իրականացվում են՝

այդպիսի ապրանքների հայտարարատուի կամ սույն Օրենսգրքով սահմանվող կամ սույն Օրենսգրքին համապատասխան անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանվող այլ անձանց կողմից.

նավահանգստային ԱՏԳ կամ լոգիստիկ ԱՏԳ ռեզիդենտի (մասնակցի, սուբյեկտի) կողմից, եթե նա իրականացնում է ապրանքների պահպանում՝ ծառայությունների մատուցման մասին պայմանագրով, եւ չի հանդիսանում այդպիսի ապրանքների հայտարարատու.

4) «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքների նկատմամբ գործողությունների կատարումը՝ սույն Օրենսգրքի 205-րդ հոդվածին համապատասխան:

4. ԱՏԳ գործունեության դադարեցման կամ ԱՏԳ տարածքում «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգը կիրառելու դադարեցման մասին որոշում ընդունելու դեպքում կամ անձի կողմից ԱՏԳ ռեզիդենտի (մասնակցի, սուբյեկտի) կարգավիճակը կորցնելու դեպքում, սույն հոդվածի 3-րդ կետով սահմանված «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգին համապատասխան, ապրանքների օգտագործման պայմանները պետք է պահպանվեն մինչեւ այդ մաքսային ընթացակարգի գործողության ավարտը կամ դադարեցումը՝ սույն Օրենսգրքի 207-րդ հոդվածի 3-րդ եւ 4-րդ կետերին համապատասխան:

5. Այն դեպքում, երբ նավահանգստային ԱՏԳ կամ լոգիստիկ ԱՏԳ ռեզիդենտը (մասնակիցը, սուբյեկտը) ծառայությունների մատուցման պայմանագրով իրականացնում է այն ապրանքների պահպանումը, որոնց հայտարարատուն չի հանդիսանում, նա պարտավոր է պահպանել ապրանքների օգտագործման

պայմանները՝ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգին համապատասխան:

Հոդված 203. ԱՏԳ տարածքը եւ ԱՏԳ տարածքում իրականացվող մաքսային գործառնությունները

1. ԱՏԳ տարածքը համարվում է մաքսային հսկողության գոտի:

Անդամ պետության օրենսդրությամբ կարող է սահմանվել, որ որ այդպիսի անդամ պետության տարածքում ստեղծված առանձին ԱՏԳ-ների տարածքը մաքսային հսկողության գոտի չի համարվում:

2. ԱՏԳ տարածքը պետք է ապահովված լինի մաքսային հսկողության իրականացման համար հարմարություններով:

ԱՏԳ տարածքը համապատասխան հարմարություններով ապահովելուն ներկայացվող պահանջները՝ ներառյալ այդ տարածքի սահմանագծի երկայնքով պարսպապատման եւ տեսահսկման համակարգի տեղավորման պահանջները, սահմանվում են անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

ԱՏԳ տարածքում հսկիչ-անցագրային ռեժիմի ապահովումը՝ ներառյալ այդ տարածք անձանց մուտք գործելու կարգի սահմանումը, իրականացվում է անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

3. ԱՏԳ տարածքում տեղավորվող ապրանքների նկատմամբ մաքսային գործառնություններն իրականացվում են սույն Օրենսգրքին համապատասխան՝ հաշվի առնելով սույն հոդվածով նախատեսված առանձնահատկությունները:

4. Ապրանքների ներմուծումը ԱՏԳ տարածք, բացառությամբ նավահանգստային ԱՏԳ եւ լոգիստիկ ԱՏԳ, իրականացվում է մաքսային մարմնին այդ ներմուծման մասին ծանուցելու միջոցով, մինչդեռ ապրանքների արտահանումը ԱՏԳ տարածքից իրականացվում է մաքսային մարմնի թույլտվությամբ:

Նավահանգստային ԱՏԳ կամ լոգիստիկ ԱՏԳ տարածք ապրանքների ներմուծումն իրականացվում է մաքսային մարմնի թույլտվությամբ:

Մաքսային կարգավորման վերաբերյալ անդամ պետությունների օրենսդրությամբ կարող են սահմանվել նշված ծանուցումը ներկայացնելու եւ նշված թույլտվությունները տրամադրելու կարգը, ինչպես նաեւ այդպիսի ծանուցումների եւ թույլտվությունների ձեւերը:

Նավահանգստային ԱՏԳ կամ լոգիստիկ ԱՏԳ տարածքից այն ապրանքների մեկնման դեպքում, որոնք այդպիսի ԱՏԳ-ների տարածքի սահմաններից դուրս ձեւակերպված են «արտահանում» մաքսային ընթացակարգով, «վերաարտահանում» մաքսային ընթացակարգով, «մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգով, «Ժամանակավոր արտահանում» մաքսային ընթացակարգով, հատուկ մաքսային ընթացակարգով, նավահանգստային ԱՏԳ կամ լոգիստիկ ԱՏԳ ռեզիդենտը (մասնակիցը, սուբյեկտը) մաքսային մարմին է ներկայացնում տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթեր, որոնք հաստատում են, որ բեռնաթափման վայր (նավահանգիստ, օդանավակայան) է հանդիսանում Միության մաքսային տարածքից դուրս գտնվող վայրը:

Մաքսային կարգավորման վերաբերյալ անդամ պետությունների օրենսդրությամբ կարող է սահմանվել ԱՏԳ տարածք ապրանքների ներմուծման եւ ԱՏԳ տարածքից ապրանքների արտահանման՝ սույն կետով նախատեսվածից տարբերվող կարգ:

5. Նավահանգստային ԱՏԳ կամ լոգիստիկ ԱՏԳ տարածք ապրանքների ներմուծման ժամանակ սույն Օրենսգրքի 204-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան այն ապրանքների նկատմամբ, որոնք ենթակա չեն մաքսային հայտարարագրման, իրականացվում են միայն սույն Օրենսգրքի 88-րդ հոդվածի 1-4-րդ կետերով նախատեսված՝ Միության մաքսային տարածք ապրանքների ժամանման հետ կապված մաքսային գործառնությունները:

6. Մաքսային մարմիններն իրավասու են իրականացնել ԱՏԳ տարածք ներմուծվող ապրանքների նույնականացում: Մաքսային մարմնի կողմից ԱՏԳ տարածք ներմուծվող ապրանքների նույնականացման կարգը սահմանվում է մաքսային կարգավորման վերաբերյալ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

7. Հայտարարատուն վարում է «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքների եւ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների հաշվառում եւ ներկայացնում է այդ ապրանքների հաշվետվությունն այն անդամ պետության մաքսային մարմին, որի տարածքում ստեղծվել է ԱՏԳ-ն:

«Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքներում կատարվող ցանկացած փոփոխություն պետք է արտացոլվի հաշվառման փաստաթղթերում:

«Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքների եւ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների հաշվառումը վարելու կարգը, ինչպես նաեւ այդպիսի ապրանքների մասին մաքսային մարմին հաշվետվություն ներկայացնելու կարգը սահմանվում են մաքսային կարգավորման վերաբերյալ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 204. Նավահանգստային ԱՏԳ կամ լոգիստիկ ԱՏԳ տարածք ներմուծվող ապրանքների՝ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպման առանձնահատկությունները

1. Նավահանգստային ԱՏԳ կամ լոգիստիկ ԱՏԳ տարածք ներմուծվող ապրանքները համարվում են «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված նավահանգստային ԱՏԳ կամ լոգիստիկ ԱՏԳ տարածք դրանց ներմուծման օրվանից՝ Բացառությամբ այն ապրանքների, որոնք սույն հոդվածի 3-րդ կետին համապատասխան ենթակա չեն «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպման:

2. Սույն հոդվածի 1-ին կետի դրույթները չեն կիրառվում նավահանգստային ԱՏԳ կամ լոգիստիկ ԱՏԳ տարածք ներմուծված միջազգային փոստային առաքանիների եւ միջազգային փոստային առաքանիներով ուղարկվող ապրանքների նկատմամբ: Այդպիսի միջազգային փոստային առաքանիների եւ միջազգային փոստային առաքանիներով ուղարկվող ապրանքների նկատմամբ մաքսային

գործառնություններն իրականացվում են նավահանգստային ԱՏԳ կամ լոգիստիկ ԱՏԳ տարածքում տեղակայված միջազգային փոստափոխանակման վայրում (հաստատությունում):

3. «Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպման ենթական չեն՝

1) միջազգային փոխադրումների տրանսպորտային միջոցները, որոնք ներմուծվում են նավահանգստային ԱՏԳ կամ լոգիստիկ ԱՏԳ տարածք եւ արտահանվում են նավահանգստային ԱՏԳ կամ լոգիստիկ ԱՏԳ տարածքից՝ կապված այդ տրանսպորտային միջոցներով ապրանքների միջազգային փոխադրումների իրականացման հետ, ինչպես նաեւ նավահանգստային ԱՏԳ կամ լոգիստիկ ԱՏԳ տարածք ներմուծվող եւ նավահանգստային ԱՏԳ կամ լոգիստիկ ԱՏԳ տարածքից արտահանվող՝ Միության տարածքով ապրանքների փոխադրումներն առանց այդ տարածքը լքելու իրականացնող տրանսպորտային միջոցները.

2) Միության ապրանքները, որոնք ներմուծվում են նավահանգստային ԱՏԳ տարածք կամ արտահանվում են նավահանգստային ԱՏԳ տարածքից Միության մաքսային տարածքի մնացած մաս՝ ծովային նավահանգստի, գետային նավահանգստի եւ օդանավակայանի վարչակազմի կողմից, ինչպես նաեւ ԱՏԳ ռեզիդենտ (մասնակից, սուբյեկտ) չհանդիսացող եւ նավագնացության անվտանգության ապահովման, օդանավերի թռիչքների անվտանգության ապահովման, ծովային նավահանգստի, գետային նավահանգստի եւ օդանավակայանի ենթակառուցվածքի օբյեկտների շահագործման անվտանգության ապահովման մասով ծովային նավահանգստում, գետային նավահանգստում, օդանավակայանում գործառնություններ կամ ծովային նավահանգստում, գետային նավահանգստում, օդանավակայանում գործունեության իրականացման հետ կապված այլ գործառնություններ իրականացնող անձանց կողմից.

3) Միության ապրանքները, որոնք նավահանգստային ԱՏԳ կամ լոգիստիկ ԱՏԳ վարչակազմի կողմից ներմուծվում են նավահանգստային ԱՏԳ կամ լոգիստիկ ԱՏԳ տարածք կամ արտահանվում են նավահանգստային ԱՏԳ կամ լոգիստիկ ԱՏԳ

տարածքից Միության մաքսային տարածքի մնացած մաս՝ կապված այդ ԱՏԳ-ների գործունեության ապահովման հետ.

4) նավահանգստային ԱՏԳ կամ լոգիստիկ ԱՏԳ տարածք ներմուծվող եւ դրա սահմաններից դուրս նախքան այդպիսի ներմուծումն «մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգով, «Ժամանակավոր արտահանում» մաքսային ընթացակարգով, «վերաարտահանում» մաքսային ընթացակարգով, հատուկ մաքսային ընթացակարգով ձեւակերպվող ապրանքները.

5) նավահանգստային ԱՏԳ կամ լոգիստիկ ԱՏԳ տարածք ներմուծվող եւ անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված դեպքերում դրա սահմաններից դուրս նախքան այդպիսի ներմուծումն «արտահանում» մաքսային ընթացակարգով կամ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքները.

6) նավահանգստային ԱՏԳ տարածք ներմուծվող եւ նավահանգստային ԱՏԳ տարածքից արտահանվող ձկնորսական նավատորմի նավերը՝ կապված այդպիսի նավերով ջրային կենսաբանական պաշարների, ջրային կենսաբանական պաշարներից արտադրված ձկնային եւ (կամ) այլ արտադրության՝ նշված նավերի վրա իրականացվող բեռնաթափման հետ, եւ (կամ) պաշար հանդիսացող ապրանքների՝ այդպիսի նավերի վրա բեռնելու նպատակների համար.

7) սույն կետի 1-ին եւ 5-րդ ենթակետերում նշված տրանսպորտային միջոցներով տեղափոխվող պաշարները:

4. Նավահանգստային ԱՏԳ կամ լոգիստիկ ԱՏԳ տարածք ներմուծված ապրանքները ենթակա չեն մաքսային հայտարարագրման՝ բացառությամբ սույն կետի երկրորդ պարբերությամբ եւ մաքսային կարգավորման վերաբերյալ անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված դեպքերի՝ սույն կետի երրորդ պարբերությանը համապատասխան:

Մաքսային հայտարարագրման ենթակա են այն ապրանքները, որոնք ներմուծված են ԱՏԳ ռեզիդենտների (մասնակիցների, սուբյեկտների) կողմից՝ նավահանգստային ԱՏԳ տարածքում տեղակայված ծովային նավահանգստի, գետային նավահանգստի, օդանավակայանի ենթակառուցվածքի օբյեկտների կամ

լոգիստիկ ԱՏԳ ենթակառուցվածքի օբյեկտների կառուցման, վերակառուցման նպատակներով:

Մաքսային կարգավորման վերաբերյալ անդամ պետությունների օրենսդրությամբ կարող են սահմանվել այլ դեպքեր, երբ նավահանգստային ԱՏԳ կամ լոգիստիկ ԱՏԳ տարածք ներմուծված ապրանքները ենթակա են մաքսային հայտարարագրման, ինչպես նաև կարող է սահմանվել մաքսային հայտարարագրման ենթակա ապրանքների վերաբերյալ մաքսային հայտարարագրի ներկայացման ժամկետ:

Հոդված 205. «Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքների եւ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների նկատմամբ իրականացվող գործողությունները

1. «Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքների եւ (կամ) «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքների օգտագործմամբ պատրաստված (ստացված) ապրանքների նկատմամբ ԱՏԳ տարածքում թույլատրվում է ցանկացած գործառնության իրականացում, այդ թվում՝

1) պահպանում.

2) ապրանքների բեռնման (բեռնաթափման) գործողություններ եւ պահպանման հետ կապված այլ բեռնային գործողություններ.

3) ապրանքների պահպանվածության ապահովման համար անհրաժեշտ գործառնություններ, ինչպես նաև ապրանքները փոխադրման (տրանսպորտային փոխադրմանը) նախապատրաստելու մասով սովորական գործառնություններ, այդ թվում՝ խմբաքանակի մասնատում, առաքումների կազմավորում, տեսակավորում, փաթեթավորում, վերափաթեթավորում, մակնշում, ինչպես նաև ապրանքների որակի բարելավմանն ուղղված գործառնություններ.

4) ապրանքների վերամշակման (մշակման), ապրանքների պատրաստման (այդ թվում՝ հավաքման, կարգավորման, մոնտաժի, հարմարեցման), ապրանքների վերանորոգման կամ տեխնիկական սպասարկման գործառնություններ, այդ թվում՝ որոնց իրականացման ժամանակ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքները մասնակցում կամ աջակցում են ապրանքների պատրաստմանը (ստացմանը), նույնիսկ եթե ապրանքների պատրաստման (ստացման) ընթացքում այդպիսի օտարերկրյա ապրանքներն ամբողջությամբ կամ մասնակի ծախսվում են (օգտագործվում են) եւ (կամ) ներառված չեն «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքներում (այսուհետ սույն գլխում՝ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքների վերամշակման գործողություններ):

«Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքների վերամշակման գործողություններ իրականացնելիս ապրանքների պատրաստմանը (ստացմանը) մասնակցող կամ աջակցող օտարերկրյա ապրանքների շարքին չեն դասվում տեխնոլոգիական գործընթացում օժանդակ միջոցներ հանդիսացող ապրանքները (օրինակ՝ սարքավորումներ, հաստոցներ, հարմարանքներ)։

5) սույն կետի 4-րդ ենթակետում նշված՝ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքների վերամշակման գործողություններ իրականացնելիս ապրանքների ծախսում (սպառում) չհանդիսացող՝ ապրանքների օգտագործումը Հանձնաժողովի կողմից սահմանվող դեպքերում։

6) ապրանքների փորձանմուշների եւ (կամ) նմուշների ընտրություն՝ սույն Օրենսգրքի 17-րդ հոդվածին համապատասխան։

2. Ապրանքների ամբողջական կամ մասնակի սպառման փաստը՝ ներառյալ ապրանքների պատրաստման (ստացման) ընթացքում, ԱՏԳ տարածքում անշարժ գույքի օբյեկտների ստեղծման, արտադրական գործընթացների ապահովման, ԱՏԳ տարածքում օգտագործվող սարքավորումների, մեքենաների եւ ագրեգատների պահպանման եւ շահագործման ընթացքում ծախսման (սպառման) ժամանակ պետք է

արտացոլվի սույն Օրենսգրքի 203-րդ հոդվածի 7-րդ կետին համապատասխան մաքսային մարմին ներկայացվող հաշվետվության մեջ:

3. «Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքների եւ (կամ) «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքների օգտագործմամբ պատրաստված (ստացված) ապրանքների նկատմամբ ԱՏԳ տարածքում թույլատրվում է սույն հոդվածի 1-ին կետում նշված գործառնությունների իրականացումը, եթե այդպիսի գործառնությունները համապատասխանում են «ԱՏԳ տարածքում գործունեության իրականացման (վարման) մասին» համաձայնագրի (պայմանագրի) («ԱՏԳ-ում գործունեության պայմանների մասին» պայմանագրի, ներդրումային հայտարարագրի, ձեռնարկատիրական ծրագրի) պայմաններին:

4. Մաքսային մարմնի թույլտվությամբ թույլատրվում է «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքների եւ (կամ) «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների արտահանում ԱՏԳ տարածքից՝ առանց «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելու՝ հետեւյալ դեպքերում՝

1) սարքավորումները, այլ հիմնական արտադրական միջոցներ համարվող նշված ապրանքները, որոնք շահագործման մեջ են դրվել եւ օգտագործվում են ԱՏԳ ռեզիդենտի (մասնակցի, սուբյեկտի) կողմից, կամ նշված արտադրական միջոցների մասեր համարվող ապրանքներն արտահանվում են Միության մաքսային տարածքի մնացած մաս՝ դրանց վերանորոգման՝ բացառությամբ կապիտալ վերանորոգման, արդիականացման, տեխնիկական սպասարկման կամ նման ապրանքները բնականոն (աշխատանքային) վիճակում պահելու նպատակով անհրաժեշտ այլ գործողություններ իրականացնելու համար.

2) նշված ապրանքներն արտահանվում են Միության մաքսային տարածքի մնացած մաս՝ դրանց նկատմամբ տեխնիկական փորձարկման, հետազոտման, թեստավորման, ստուգման, այդ թվում՝ արտադրական գործընթացով նախատեսված

գործողություններ իրականացնելու, ինչպես նաև որպես նմուշներ ցուցադրելու համար.

3) նշված ապրանքներն արտահանվում են այն անդամ պետության մաքսային տարածքի մնացած մաս, որի տարածքում ստեղծված է ԱՏԳ-ն՝ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելուն ուղղված՝ մաքսային գործառնություններ իրականացնելու համար՝ մաքսային մարմնում, որը, մաքսային կարգավորման վերաբերյալ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, իրավասու է այդպիսի ապրանքների նկատմամբ իրականացնելու մաքսային գործառնություններ.

4) նշված ապրանքներն արտահանվում են այն անդամ պետության մնացած հատված, որի տարածքում ստեղծված է ԱՏԳ-ն՝ սեփական արտադրական եւ տեխնոլոգիական կարիքների համար: Պայմանները, որոնց դեպքում թույլատրվում է ԱՏԳ տարածքից դուրս նշված ապրանքների արտահանումը, ինչպես նաև անդամ պետության տարածքի այն հատվածը, որտեղ թույլատրվում է այդպիսի արտահանումը սահմանվում են Հանձնաժողովի կողմից:

5) նշված ապրանքներն արտահանվում են Միության մաքսային տարածքի մնացած մաս ապրանքների վերամշակման (մշակման), ապրանքների պատրաստման՝ ներառյալ հավաքմանը, մոնտաժման, հարմարեցման եւ Հանձնաժողովի կողմից սահմանվող այլ գործողություններ իրականացնելու համար, այն պայմանով, որ նման ապրանքների հետ կապված այդ ԱՏԳ տարածքում բացակայում են նման գործողություններ իրականացնելու պայմանները եւ հնարավորությունը. Այն դեպքերը եւ պայմանները, երբ այդ դեպքում թույլատրվում է նշված ապրանքների արտահանումը ԱՏԳ տարածքից սահմանվում են Հանձնաժողովի կողմից:

5. Սույն հոդվածի 4-րդ կետում 1-ին, 2-րդ, 4-րդ եւ 5-րդ ենթակետերում նշված ապրանքները ենթակա են հետադարձ ներմուծման ԱՏԳ տարածք մինչեւ մաքսային մարմնի կողմից սահմանված ժամկետը լրանալը՝ ելնելով այդ գործողությունների իրականացման նպատակներից եւ հանգամանքներից: Մաքսային մարմնի կողմից

սահմանված ժամկետը կարող է երկարաձգվել ԱՏԳ ռեզիդենտի (մասնակցի, սուբյեկտի) հիմնավորված դիմումի հիման վրա:

Սույն հոդվածի 4-րդ կետի 3-րդ ենթակետի մեջ նշված ապրանքների նկատմամբ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողությունը պետք է ավարտվի մինչև մաքսային մարմնի կողմից սահմանված ժամկետը լրանալը: Մաքսային մարմնի կողմից սահմանված ժամկետը կարող է երկարաձգվել ԱՏԳ ռեզիդենտի (մասնակցի, սուբյեկտի) հիմնավորված դիմումի հիման վրա:

6. Մաքսային մարմնի կողմից սույն հոդվածի 4-րդ կետում նշված թույլտվության տրամադրման կարգը սահմանվում է անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան:

7. «Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված բոլոր ապրանքների կամ ապրանքների մի մասի, եւ (կամ) «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների նկատմամբ ԱՏԳ տարածքում կարող են իրականացվել գործարքներ, որոնք նախատեսում են այդ ապրանքների տիրապետման, օգտագործման եւ (կամ) տնօրինման իրավունքի փոխանցում: Ընդ որում, «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողությունը պետք է ավարտվի սույն Օրենսգրքով սահմանված կարգով՝ բացառությամբ սույն հոդվածի 8-10-րդ կետերով նախատեսված դեպքի:

8. Թույլատրվում է «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքների եւ (կամ) «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների փոխանցում տիրապետման եւ (կամ) օգտագործման՝ առանց «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելու:

կապալառուին (ենթակապալառուին) կամ այլ՝ այդ թվում ԱՏԳ ռեզիդենտ (մասնակից, սուբյեկտ) չհանդիսացող անձին՝ ԱՏԳ տարածքում շինարարական եւ (կամ) մոնտաժման կապալային աշխատանքների իրականացման համար:

փոխադրողի՝ դրանք փոխադրելու համար:

անձանց, որոնք իրականացնելու են վերանորոգում (բացառությամբ կապիտալ վերանորոգման, արդիականացման), տեխնիկական սպասարկում եւ (կամ) այդպիսի ապրանքները բնականոն (աշխատանքային) վիճակում պահպանելու համար այլ անհրաժեշտ գործառնություններ.

անձանց, որոնք իրականացնելու են արտադրական գործընթացով նախատեսված՝ այդպիսի ապրանքների տեխնիկական փորձարկման, հետազոտման, թեստավորման, ստուգման գործառնություններ, ինչպես նաեւ դրանց՝ որպես նմուշ ցուցադրությունը.

անձանց, որոնք իրականացնելու են սույն հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետով նախատեսված գործառնություններ նավահանգստային կամ լոգիստիկ ԱՏԳ տարածքում, իսկ անդամ պետությունների օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաեւ նավահանգստային կամ լոգիստիկ ԱՏԳ-ներ չհանդիսացող ԱՏԳ-ների տարածքներում.

անձանց, որոնք իրականացնելու են ԱՏԳ տարածքից արտահանվող ապրանքների նկատմամբ գործառնություններ՝ սույն հոդվածի 4-րդ կետի 1-ին, 2-րդ, 4-րդ եւ 5-րդ ենթակետերով նախատեսված դեպքերում:

Սույն կետին համապատասխան տիրապետման եւ (կամ) օգտագործման իրավունքով ապրանքների փոխանցումը նշված անձանց այդ ապրանքների հայտարարատուին չի ազատում սույն գլխով նախատեսված՝ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգին համապատասխան ապրանքների օգտագործման պայմանները պահպանելուց:

9. Մաքսային կարգավորման վերաբերյալ անդամ պետությունների օրենսդրությամբ կարող են սահմանվել դեպքեր, որք թույլատրվում է ԱՏԳ ռեզիդենտի (մասնակցի, սուբյեկտի) կողմից «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքների եւ (կամ) «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների տիրապետման, օգտագործման եւ (կամ) տնօրինման իրավունքների փոխանցում այդ ԱՏԳ այլ ռեզիդենտի (մասնակցի, սուբյեկտի)՝ առանց «ազատ

մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողությունը ավարտելու, ինչպես նաև՝ այդ դեպքերում ապրանքների փոխանցման կարգը եւ պայմանները:

Այդպիսի դեպքեր հայտնաբերելու դեպքում անդամ պետությունների օրենսդրությամբ կարող է սահմանվել, որ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգին համապատասխան ապրանքների օգտագործման պայմանները պահպանելու եւ այդպիսի մաքսային ընթացակարգի գործողությունը ավարտելու հայտարարատուի պարտականությունը վերապահվում է այն անձանց, որոնց փոխանցվել են նշված ապրանքների նկատմամբ տիրապետման, օգտագործման եւ (կամ) տնօրինման իրավունքները, ինչպես նաև սահմանվել է այն պահը, որից դրանք վերապահվում են այդ անձանց:

10. Մաքսային կարգավորման վերաբերյալ անդամ պետության օրենսդրությամբ կարող է սահմանվել, որ այդպիսի անդամ պետության տարածքում ստեղծված առանձին ԱՏԳ-ների տարածքներում «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված եւ (կամ) «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների տիրապետման, օգտագործման եւ (կամ) տնօրինման իրավունքները փոխանցումը թույլատրվում է առանց «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողությունը ավարտելու:

Նշված դեպքում անդամ պետությունների օրենսդրությամբ կարող է սահմանվել, որ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգին համապատասխան ապրանքների օգտագործման պայմանները պահպանելու եւ այդպիսի մաքսային ընթացակարգի գործողությունը ավարտելու հայտարարատուի պարտականությունը վերապահվում է այն անձանց, որոնց փոխանցվել են նշված ապրանքների նկատմամբ տիրապետման, օգտագործման եւ (կամ) տնօրինման իրավունքները, ինչպես նաև սահմանվել է այն պահը, որից դրանք վերապահվում են այդ անձանց:

11. Անձի կողմից նավահանգստային կամ լոգիստիկ ԱՏԳ ռեզիդենտի (մասնակցի, սուբյեկտի) կարգավիճակը կորցնելու դեպքում «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքները կարգավիճակը կորցնելու օրվանից 4 ամսվա ընթացքում, ԱՏԳ այդպիսի ռեզիդենտի (մասնակցի, սուբյեկտի) հետ

ծառայությունների մատուցման մասին պայմանագիր կնքած անձանց կողմից կարող են փոխանցվել նավահանգստային կամ լոգիստիկ ԱՏԳ այլ ռեզիդենտի՝ (մասնակցի, սուբյեկտի) այդպիսի այլ ռեզիդենտի հետ կնքվող ծառայությունների մատուցման մասին պայմանագրի հիման վրա կամ կարող են ձեռակերպվել սույն Օրենսգրքով նախատեսված մաքսային ընթացակարգերով:

Նշված գործողությունները չկատարելու դեպքում, սահմանված ժամկետը լրանալուց հետո «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողությունը դադարում է, իսկ ապրանքները արգելապահվում են մաքսային մարմինների կողմից՝ սույն Օրենսգրքի 51-րդ գլխին համապատասխան:

12. Հանձնաժողովն իրավունք ունի սահմանելու «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեռակերպված ապրանքների նկատմամբ արգելված գործողությունների, այդ թվում՝ գործառնությունների, ցանկը:

13. Անդամ պետությունների օրենսդրությամբ կարող է սահմանվել տվյալ պետությունների տարածքներում ստեղծված (ստեղծվող) ԱՏԳ-ում «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեռակերպված ապրանքների նկատմամբ արգելված գործողությունների, այդ թվում՝ գործառնությունների, ցանկը:

Հոդված 206. «Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեռակերպված օտարերկրյա ապրանքների նույնականացումը «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեռակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքներում

1. «Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեռակերպված օտարերկրյա ապրանքները «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեռակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքներում նույնականացնելու նպատակներով կարող են օգտագործվել հետևյալ միջոցները՝

1) «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեռակերպված օտարերկրյա ապրանքների վրա կնիքների, դրոշմակնիքների դնում, թվային եւ այլ դրոշմավորման կատարում.

2) օտարերկրյա ապրանքների մանրամասն նկարագրում, լուսանկարում, մասշտաբային պատկերում.

3) օտարերկրյա ապրանքների եւ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեռակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների՝ նախապես վերցված փորձանմուշների եւ (կամ) նմուշների համադրում.

4) ապրանքների առկա դրոշմավորման օգտագործում՝ ներառյալ սերիական համարների ձեռով դրոշմավորումը.

5) այլ եղանակներ, որոնք կարող են կիրառվել՝ ելնելով «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեռակերպված ապրանքների բնույթից եւ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեռակերպված ապրանքների վերամշակման գործողություններից, այդ թվում՝ ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության միջոցով, որոնք պարունակում են «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեռակերպված ապրանքների վերամշակման գործողություններ իրականացնելու տեխնոլոգիական գործընթացում «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեռակերպված օտարերկրյա

ապրանքների օգտագործման, ինչպես նաև դրանց արտադրության տեխնոլոգիայի մասին ներկայացված մանրամասն տեղեկություններ, կամ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքների վերամշակման գործողություններ կատարելու ժամանակ մաքսային հսկողության իրականացման միջոցով:

2. «Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքներում «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքները նույնականացնելու կարգը սահմանվում է մաքսային կարգավորման վերաբերյալ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 207. «Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելը եւ դադարեցնելը

1. «Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողությունը պետք է ավարտվի հետևյալ դեպքերում՝

1) ԱՏԳ գործունեության դադարեցման կամ ԱՏԳ տարածքում «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի կիրառումը դադարեցնելու մասին որոշում ընդունելու դեպքում՝ ԱՏԳ գործողությունը դադարեցնելու կամ այդպիսի որոշում ընդունելու օրվանից 6 ամսվա ընթացքում.

2) «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ապրանքները ձեւակերպող անձի կողմից ԱՏԳ ռեզիդենտի (մասնակցի, սուբյեկտի) կարգավիճակը կորցնելու դեպքում՝ անձի կողմից այդպիսի կարգավիճակը կորցնելու օրվանից 6 ամսվա ընթացքում.

3) «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքների, «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների արտահանում ԱՏԳ տարածքից՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այդպիսի ապրանքներն արտահանվում են՝

սույն Օրենսգրքի 205-րդ հոդվածի 4-րդ կետում նշված նպատակներով.

սույն Հոդվածի 7-րդ կետով նախատեսված դեպքերում դրանց՝ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան մեկ ԱՏԳ տարածքից դեպի այլ ԱՏԳ տարածք փոխադրման համար.

թաղելու, վնասագերծելու, ուտիլիզացնելու կամ այլ եղանակով ոչնչացվելու նպատակով՝ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան, եթե այդպիսի ապրանքները կորցրել են իրենց սպառողական հատկությունները եւ դարձել են ոչ պիտանի այն նպատակով օգտագործվելու համար, որի համար նախատեսված են.

4) ապրանքների սպառումը սույն Օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետին համապատասխան.

5) ԱՏԳ ռեզիդենտի (մասնակցի, սուբյեկտի) կողմից «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքների, եւ (կամ) «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների տիրապետման, օգտագործման եւ (կամ) տնօրինման իրավունքներն ԱՏԳ այլ ռեզիդենտի (մասնակցի, սուբյեկտի) կամ ԱՏԳ ռեզիդենտ (մասնակից, սուբյեկտ) չհանդիսացող այլ անձի՝ սույն հոդվածի 7-րդ եւ 8-րդ կետերին համապատասխան փոխանցելու դեպքում՝ բացառությամբ սույն Օրենսգրքի 205-րդ հոդվածի 8-10-րդ կետերում նշված դեպքերում ապրանքների փոխանցման:

2. «Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելիս ապրանքների հայտարարատու կարող է հանդես գալ՝

1) «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ապրանքների ձեւակերպման ժամանակ որպէս հայտարարատու հանդես եկող անձը.

2) ԱՏԳ ռեզիդենտը (մասնակիցը, սուբյեկտը), որին սույն Օրենսգրքի 205-րդ հոդվածի 9-րդ կետին համապատասխան փոխանցված է «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքների եւ (կամ) «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքներից պատրաստված

(ստացված) ապրանքների տիրապետման, օգտագործման եւ (կամ) տնօրինման իրավունքը.

3) այն անձը, որին սույն Օրենսգրքի 205-րդ հոդվածի 10-րդ կետին համապատասխան փոխանցված է «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքների եւ (կամ) «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների տիրապետման, օգտագործման եւ (կամ) տնօրինման իրավունքը.

4) ԱՏԳ ռեզիդենտը (մասնակիցը, սուբյեկտը) կամ անձինք, որոնք նշված են սույն Օրենսգրքի 202-րդ հոդվածի 2-րդ կետի երկրորդ պարբերության մեջ՝ նավահանգստային կամ լոգիստիկ ԱՏԳ տարածքում գտնվող ապրանքների նկատմամբ.

5) ԱՏԳ ռեզիդենտ (մասնակից, սուբյեկտ) չհանդիսացող անձը, որին փոխանցված է «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքների եւ (կամ) «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների տիրապետման, օգտագործման եւ (կամ) տնօրինման իրավունքը, եթե «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտվում է սույն հոդվածի 5-րդ կետի 3-րդ ենթակետին կամ 6-րդ կետի 1-ին ենթակետին համապատասխան:

3. ԱՏԳ գործունեության դադարեցման կամ ԱՏԳ տարածքում «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի կիրառումը դադարեցնելու մասին որոշում ընդունելու դեպքում, «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտվում է սույն Օրենսգրքով նախատեսված՝ դրա տարածքում գտնվող՝ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքները եւ (կամ) «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքները մաքսային ընթացակարգերով ձեւակերպմամբ՝ բացառությամբ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի՝ հաշվի առնելով սույն հոդվածի 5-րդ, 6-րդ, 9-րդ եւ 11-րդ կետերը:

Հանձնաժողովն իրավունք ունի է սահմանելու «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելու այլ կարգ այն ԱՏԳ-ների գործունեության դադարեցման դեպքում, որոնց սահմաններն ամբողջությամբ կամ մասամբ համընկնում են Միության մաքսային սահմանի հատվածների հետ, կամ այդ ԱՏԳ տարածքներում «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի կիրառումը դադարեցնելու վերաբերյալ որոշում կայացնելու դեպքում:

Սույն կետի առաջին պարբերությանը համապատասխան սույն հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետում նշված ժամկետը լրանալուն պես «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողությունը չավարտելու դեպքում, այդ մաքսային ընթացակարգի գործողությունը դադարեցվում է, իսկ ապրանքներն արգելանքի են վերցվում (արգելապահվում են) մաքսային մարմինների կողմից՝ սույն Օրենսգրքի 51-րդ գլխին համապատասխան:

4. Անձի կողմից ԱՏԳ ռեզիդենտի (մասնակցի, սուբյեկտի) կարգավիճակը կորցնելու դեպքում, «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործունեությունն ավարտվում է սույն Օրենսգրքով նախատեսված մաքսային ընթացակարգերով՝ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքները եւ (կամ) «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների ձեւակերպմամբ՝ բացառությամբ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի՝ հաշվի առնելով սույն հոդվածի 5-րդ, 6-րդ, 9-րդ եւ 12-րդ կետերը:

Սույն կետի առաջին պարբերությանը համապատասխան սույն հոդվածի 2-ին կետի 1-ին ենթակետում նշված ժամկետը լրանալուն պես «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողությունը չավարտելու դեպքում, այդ մաքսային ընթացակարգի գործողությունը դադարեցվում է, իսկ ապրանքներն արգելանքի են վերցվում (արգելապահվում են) մաքսային մարմինների կողմից՝ սույն Օրենսգրքի 51-րդ գլխին համապատասխան:

5. ԱՏԳ տարածքից ապրանքները Միության մաքսային տարածքի սահմաններից դուրս արտահանելու համար «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտվում է՝

1) «վերաարտահանում» մաքսային ընթացակարգով ձեռակերպելով ներքոնշյալ ապրանքները՝

«ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեռակերպված եւ անփոփոխ վիճակում արտահանվող օտարերկրյա ապրանքները, բացի բնական մաշվածության հետեւանքով առաջացած փոփոխություններից, ինչպես նաեւ փոխադրման (տրանսպորտային փոխադրման) եւ (կամ) պահպանման բնականոն պայմաններում բնական կորստի հետեւանքով առաջացած փոփոխություններից.

«ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեռակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքները, այն դեպքում, երբ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեռակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքները չեն ճանաչվել Միության ապրանքներ՝ սույն Օրենսգրքի 210-րդ հոդվածին համապատասխան.

2) «արտահանում» մաքսային ընթացակարգով ձեռակերպելով ներքոնշյալ ապրանքները՝

Միության՝ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեռակերպված ապրանքները.

Միության ապրանքներից պատրաստված (ստացված), այդ թվում՝ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով չձեռակերպված ապրանքները.

«ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեռակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքները, այն դեպքում, երբ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեռակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքները ճանաչվել են Միության ապրանքներ՝ սույն Օրենսգրքի 210-րդ հոդվածին համապատասխան.

3) «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեռակերպված եւ նավահանգստային կամ լոգիստիկ ԱՏԳ տարածքից անփոփոխ վիճակում արտահանվող օտարերկրյա ապրանքները սույն Օրենսգրքի 142-րդ հոդվածի 3-րդ կետի 1-ին եւ 3-րդ ենթակետերին համապատասխան «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձեռակերպմամբ՝ բացի բնական մաշվածության

հետեւանքով առաջացած փոփոխություններից, ինչպես նաև փոխադրման (տրանսպորտային փոխադրման) եւ (կամ) պահպանման բնականոն պայմաններում բնական կորստի հետեւանքով առաջացած փոփոխություններից:

6. ԱՏԳ տարածքից ապրանքները Միության մաքսային տարածքի մնացած մաս արտահանելու համար «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտվում է՝

1) սույն Օրենսգրքի 127-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 4, 5, 7, 10, 14-16 ենթակետերում նշված մաքսային ընթացակարգերով «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված եւ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքների վերամշակման գործողություններին չենթարկված օտարերկրյա ապրանքների եւ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների ձեւակերպմամբ՝ հաշվի առնելով սույն հոդվածի 7-րդ կետը.

2) «վերաներմուծում» մաքսային ընթացակարգով ձեւակերպելով ներքոնշյալ ապրանքները՝

«ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված Միության ապրանքները, որոնք մնացել են անփոփոխ վիճակում, բացի բնական մաշվածության հետեւանքով առաջացած փոփոխություններից, ինչպես նաև փոխադրման (տրանսպորտային փոխադրման) եւ (կամ) պահպանման բնականոն պայմաններում բնական կորստի հետեւանքով առաջացած փոփոխություններից.

«ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված, բացառապես Միության ապրանքներից, այդ թվում՝ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով չձեւակերպված Միության ապրանքների օգտագործմամբ պատրաստված (ստացված) ապրանքները.

3) «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված եւ մեկ անդամ պետության նավահանգստային կամ լոգիստիկ ԱՏԳ տարածքից այլ անդամ պետության տարածք անփոփոխ վիճակում արտահանվող օտարերկրյա ապրանքները սույն Օրենսգրքի 142-րդ հոդվածի 3-րդ կետի 1-ին եւ 3-րդ ենթակետերին համապատասխան «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով

ձեռակերպմամբ, բացի բնական մաշվածության հետեւանքով առաջացած փոփոխություններից, ինչպես նաեւ փոխադրման (տրանսպորտային փոխադրման) եւ (կամ) պահպանման բնականոն պայմաններում բնական կորստի հետեւանքով առաջացած փոփոխություններից:

7. Եթե «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեռակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների կազմի մեջ են մտնում օտարերկրյա ապրանքներ, որոնց նկատմամբ տարածվում են ներքին շուկայի պաշտպանության միջոցները, այդպիսի ապրանքները ԱՏԳ տարածքից Միության մաքսային տարածքի մնացած մաս արտահանելու համար կարող են ձեռակերպվել սույն Օրենսգրքի 127-րդ հոդվածի 2 կետի 1 եւ 7 ենթակետերում նշված մաքսային ընթացակարգերով, պայմանով, որ այդ ապրանքներում կնույնականացվեն «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեռակերպված օտարերկրյա ապրանքները:

8. Ապրանքներն «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեռակերպած ԱՏԳ ռեզիդենտի (մասնակցի, սուբյեկտի) կողմից «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեռակերպված կամ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեռակերպված ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների տիրապետման, օգտագործման եւ (կամ) տնօրինման իրավունքներն ԱՏԳ այլ ռեզիդենտի (մասնակցի, սուբյեկտի) փոխանցելիս «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտվում է այն ԱՏԳ ռեզիդենտի (մասնակցի, սուբյեկտի) կողմից «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով այդ ապրանքների ձեռակերպմամբ, որին փոխանցվել է այդպիսի ապրանքների տիրապետման, օգտագործման եւ (կամ) տնօրինման իրավունքը:

Եթե նշված դեպքում անհրաժեշտ է փոխադրել ապրանքները ԱՏԳ մեկ տարածքից ԱՏԳ այլ տարածք այդպիսի փոխադրումն իրականացվում է «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան՝ սույն Օրենսգրքի 22-րդ գլխով նախատեսված կարգով եւ պայմաններով՝ բացառությամբ սույն կետի երրորդ պարբերությամբ նախատեսված դեպքի:

Միության ապրանքները փոխադրվում են ԱՏԳ մեկ տարածքից ԱՏԳ այլ տարածք՝ այդ ապրանքներն առանց «մաքսային տարանցում» ընթացակարգով ձեւակերպելու, եթե այդպիսի ԱՏԳ-ները գտնվում են մեկ անդամ պետության տարածքում՝ բացառությամբ Միության անդամ չհանդիսացող պետությունների տարածքներով եւ (կամ) ծովով տեղափոխվող Միության ապրանքների:

9. «Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպած ապրանքների՝ ԱՏԳ ռեզիդենտի (մասնակցի, սուբյեկտի) կողմից «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված կամ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների տիրապետման, օգտագործման եւ (կամ) տնօրինման իրավունքներն ԱՏԳ ռեզիդենտ չհանդիսացող անձին (մասնակցին, սուբյեկտին) փոխանցելիս դրանք՝ ԱՏԳ այն տարածքից, որտեղ կիրառվում է «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգը, Միության մաքսային տարածքի մնացած մաս արտահանելու համար, «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտվում է այդպիսի ապրանքների՝ սույն հոդվածի 6-րդ կետի 1-ին ենթակետում նշված ընթացակարգերով ձեւակերպմամբ, բացառությամբ դեպքերի, երբ սույն հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետին համապատասխան ապրանքները կարող են արտահանվել ԱՏԳ տարածքից առանց «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտվելու:

10. «Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտվում է առանց ապրանքները մաքսային ընթացակարգերով ձեւակերպելու, սույն հոդվածի 12-րդ եւ 13-րդ կետերով նախատեսված դեպքերում, ինչպես նաեւ հետեւյալ դեպքերում.

1) «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքները եւ (կամ) «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքները կորցրել են իրենց սպառողական հատկությունները եւ ոչ պիտանի են դարձել այն նպատակով օգտագործման համար, ինչի համար դրանք նախատեսված են, արտահանվում են ԱՏԳ տարածքից՝ դրանք թաղելու, վնասազերծելու, ուտիլիզացնելու կամ այլ կերպ ոչնչացնելու համար՝ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

Ընդ որում, «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգն ավարտվում է «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքների մի մասի նկատմամբ, որը համապատասխանում է թաղված, վնասազերծված, ուտիլիզացված կամ այլ կերպ ոչնչացված ապրանքների քանակին, եւ սահմանվում է մաքսային կարգավորման վերաբերյալ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան.

2) «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքները ոչնչացվել է (կամ) անվերադարձ կորել են վթարի կամ անհաղթահարելի ուժի ազդեցության հետեւանքով կամ անվերադարձ կորել են փոխադրման (տրանսպորտային փոխադրման) եւ (կամ) պահպանման բնականոն պայմաններում բնական կորստի հետեւանքով, եւ նման ոչնչացման կամ անվերադարձ կորելու փաստը ճանաչվել է մաքսային մարմնի կողմից՝ մաքսային կարգավորման վերաբերյալ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան.

3) «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքները եւ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքները սպառվել են՝ սույն Օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետին համապատասխան.

4) նավահանգստային կամ լոգիստիկ ԱՏԳ տարածքում «ազատ մաքսային գոտի» ընթացակարգով ձեւակերպվող օտարերկրյա ապրանքները, որոնք մնացել են անփոփոխ վիճակում, բացի բնական մաշվածության հետեւանքով առաջացած փոփոխություններից, ինչպես նաեւ փոխադրման (տրանսպորտային փոխադրման) եւ (կամ) պահպանման բնականոն պայմաններում բնական կորստի հետեւանքով առաջացած փոփոխություններից, անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված դեպքերում արտահանվում են Միության մաքսային տարածքի սահմաններից դուրս մեկնման վայրով, որին միանում է այդպիսի նավահանգստային կամ լոգիստիկ ԱՏԳ-ն.

11. Սույն հոդվածի 10-րդ կետի 1-ին, 2-րդ եւ 4-րդ ենթակետերով նախատեսված դեպքերում «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողությունն

ավարտելու կարգը սահմանվում է մաքսային կարգավորման վերաբերյալ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

Սույն Հոդվածի 10-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված դեպքում «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելու կարգը սահմանվում է Հանձնաժողովի կողմից:

12. ԱՏԳ գործունեության դադարեցման կամ ԱՏԳ տարածքում «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի կիրառումը դադարեցնելու մասին որոշում ընդունելու դեպքում, «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված, «ԱՏԳ տարածքում գործունեության իրականացման (վարման) մասին» համաձայնագրի (պայմանագրի) («ԱՏԳ-ում գործունեության պայմանների մասին» պայմանագրի, ներդրումային հայտարարագրի, ձեռնարկատիրական ծրագրի) իրականացման համար ԱՏԳ ռեզիդենտի (մասնակցի, սուբյեկտի) կողմից շահագործման մեջ դրված եւ օգտագործվող՝ սարքավորում համարվող ապրանքների կամ անշարժ գույքի օբյեկտներ ստեղծելու համար օգտագործվող եւ անշարժ գույքի այդպիսի օբյեկտների բաղկացուցիչ մաս կազմող ապրանքների համար «ազատ մաքսային տարածք» մաքսային ընթացակարգը ավարտվում է առանց նշված ապրանքները մաքսային ընթացակարգերով ձեւակերպելու՝ անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հանձնաժողովն իրավասու է սահմանել նշված ապրանքների նկատմամբ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողության ավարտելու կարգը:

Նշված ապրանքները Միության ապրանքների կարգավիճակ են ձեռք բերում «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտվելու օրվանից:

13. «ԱՏԳ տարածքում գործունեության իրականացման (վարման) մասին» համաձայնագրի (պայմանագրի) («ԱՏԳ-ում գործունեության պայմանների մասին» պայմանագրի, ներդրումային հայտարարագրի) գործողության ժամկետը լրանալու եւ այդ Համաձայնագրով սահմանված պայմանները կատարելու հետ կապված՝ անձի կողմից ԱՏԳ ռեզիդենտի (մասնակցի, սուբյեկտի) կարգավիճակը կորցնելու դեպքում «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված՝ «ԱՏԳ

տարածքում գործունեության իրականացման (վարման) մասին» համաձայնագրի (պայմանագրի) («ԱՏԳ-ում գործունեության պայմանների մասին» պայմանագրի, ներդրումային հայտարարագրի, ձեռնարկատիրական ծրագրի) իրագործման նպատակով «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված, ԱՏԳ ռեզիդենտի (մասնակցի, սուբյեկտի) կողմից շահագործման մեջ դրված եւ օգտագործվող՝ սարքավորում կամ ԱՏԳ տարածքում անշարժ գույքի օբյեկտներ ստեղծելու համար օգտագործված եւ այդպիսի անշարժ գույքի օբյեկտների բաղկացուցիչ մաս համարվող ապրանքների նկատմամբ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողությունը ավարտվում է առանց նշված ապրանքները անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված կարգով մաքսային ընթացակարգերով ձեւակերպելու:

Հանձնաժողովն իրավասու է սահմանել նշված ապրանքների նկատմամբ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողության ավարտելու կարգը:

Նշված ապրանքները Միության ապրանքների կարգավիճակ են ձեռք բերում «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտվելու օրվանից:

14. ԱՏԳ ռեզիդենտ (մասնակից, սուբյեկտ) համարվող անձի լուծարման (գործունեության դադարեցման) դեպքում «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգն ավարտվում է մաքսային կարգավորման վերաբերյալ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 208. «Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպվող (ձեւակերպված) օտարերկրյա ապրանքների մասով ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության առաջացումը եւ դադարեցումը, դրանց վճարման ժամկետն ու հաշվարկումը

1. Հայտարարատուի՝ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպվող (ձեւակերպված) օտարերկրյա ապրանքների համար ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերը

վճարելու պարտավորությունն առաջանում է մաքսային մարմնի կողմից ապրանքների հայտարարագիրը գրանցելու պահից՝ բացառությամբ սույն կետի երկրորդ-երրորդ պարբերություններով նախատեսված դեպքերի:

«Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպվող (ձեւակերպված) օտարերկրյա այն ապրանքների մասով ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունը, որոնք հայտագրվել են բացթողման համար մինչեւ ապրանքների հայտարարագիր ներկայացնելը, առաջանում է նախքան ապրանքների հայտարարագիր ներկայացնելը ապրանքների բացթողման մասին դիմումը ներկայացրած անձի համար՝ ապրանքների բացթողման մասին դիմումը մաքսային մարմնի կողմից գրանցելու պահից:

Հայտարարատուի՝ նավահանգստային կամ լոգիստիկ ԱՏԳ տարածքում «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպվող (ձեւակերպված) օտարերկրյա ապրանքների համար ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունն առաջանում է դրանք նավահանգստային կամ լոգիստիկ ԱՏԳ տարածք ներմուծելու պահից:

2. Միության անդամ չհանդիսացող պետության տարածքից նավահանգստային կամ լոգիստիկ ԱՏԳ տարածք ներմուծվող եւ սույն Օրենսգրքի 204-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն մաքսային հայտարարագրման չենթարկվող օտարերկրյա ապրանքների համար ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունն առաջանում է ծառայությունների մատուցման մասին պայմանագիր կնքած նավահանգստային կամ լոգիստիկ ԱՏԳ ռեզիդենտի (մասնակցի, սուբյեկտի) մոտ՝ այդ ապրանքները նավահանգստային կամ լոգիստիկ ԱՏԳ տարածք ներմուծելու պահից:

3. «Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքների մասով ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունը, առաջանում այն անձանց մոտ, որոնց սույն Օրենսգրքի 205-րդ հոդվածի 8 եւ 9 կետերին

համապատասխան փոխանցվել են՝ այդպիսի ապրանքների եւ (կամ) «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների նկատմամբ տիրապետման, օգտագործման եւ (կամ) տնօրինման իրավունքները, եւ որոնց վերապահված է «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգին համապատասխան ապրանքի օգտագործման պայմանները պահպանելու եւ այդպիսի մաքսային ընթացակարգի գործողությունը ավարտելու հայտարարատուի պարտականությունը, այն պահից, որից հայտարարատուի նշված պարտականությունները վերապահվում են այդպիսի անձանց:

4. «Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպվող (ձեւակերպված) օտարերկրյա ապրանքների մասով ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու՝ սույն հոդվածի 1-3-րդ կետերում նշված անձանց պարտավորությունը դադարում է հետեւյալ հանգամանքների ի հայտ գալու դեպքում՝

1) «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողությունը՝ սույն Օրենսգրքի 207-րդ հոդվածին համապատասխան ավարտելու, այդ թվում՝ սույն հոդվածի 6-րդ կետում նշված հանգամանքների ի հայտ գալու դեպքում՝ բացառությամբ սույն Օրենսգրքի 207-րդ հոդվածի 5-րդ կետի 2-րդ ենթակետի չորրորդ պարբերության մեջ նշված ապրանքները «արտահանում» մաքսային ընթացակարգով ձեւակերպելիս «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելու դեպքի.

2) Միության մաքսային տարածքից սույն Օրենսգրքի 207-րդ հոդվածի 5-րդ կետի 2-րդ ենթակետի չորրորդ պարբերության մեջ նշված՝ «արտահանում» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքների արտահանումը.

3) օտարերկրյա ապրանքների նկատմամբ կիրառելի մաքսային ընթացակարգերով ապրանքների ձեւակերպում՝ սույն Օրենսգրքի 129-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան.

4) ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության կատարում եւ (կամ) սույն

հողվածի 7-րդ կետին համապատասխան հաշվարկված եւ վճարման ենթակա չափերով դրանց բռնագանձում.

5) անդամ պետության՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան մաքսային մարմնի կողմից վթարի կամ անհաղթահարելի ուժի ազդեցության հետեւանքով «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքների եւ (կամ) «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների ոչնչացման եւ (կամ) անվերադարձ կորստի կամ փոխադրման (տրանսպորտային փոխադրման) եւ (կամ) պահպանման բնականոն պայմաններում բնական կորստի հետեւանքով այդ ապրանքների անվերադարձ կորստի փաստը ճանաչելը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ մինչեւ այդպիսի ոչնչացումը կամ անվերադարձ կորուստը, սույն Օրենսգրքին համապատասխան, վրա է հասել այդ ապրանքների համար ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու ժամկետը.

6) «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգին համապատասխան ապրանքների բացթողումը մերժելը՝ ապրանքների հայտարարագրի կամ նախքան ապրանքների հայտարարագիրը ներկայացնելը ապրանքների բացթողման մասին դիմումի գրանցման ժամանակ առաջացած՝ ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության առնչությամբ.

7) սույն Օրենսգրքի 113-րդ հոդվածին համապատասխան ապրանքների հայտարարագիրը հետ կանչելը եւ (կամ) սույն Օրենսգրքի 118-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան ապրանքների բացթողումը չեղյալ ճանաչելը՝ ապրանքների հայտարարագրի գրանցման ժամանակ առաջացած՝ ներմուծման մաքսատուրքեր, հարկեր, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքեր վճարելու պարտավորության առնչությամբ.

8) ապրանքները բռնագրավելը կամ անդամ պետության սեփականություն (եկամուտ) դարձնելը՝ այդ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան.

9) մաքսային մարմնի կողմից սույն Օրենսգրքի 51-րդ գլխին համապատասխան ապրանքներն արգելանքի վերցնելը (արգելապահելը)։

10) այն ապրանքները ժամանակավոր պահպանման հանձնելը կամ մաքսային ընթացակարգերից որեւէ մեկով ձեւակերպելը, որոնք առգրավվել են կամ որոնց վրա արգելանք է դրվել հանցագործության մասին հաղորդումը ստուգելու, քրեական գործով վարույթի կամ վարչական իրավախախտման գործով վարույթի (վարչական վարույթի վարման) ընթացքում, եւ որոնց նկատմամբ ընդունվել է որոշում՝ դրանք վերադարձնելու մասին, եթե նախկինում այդպիսի ապրանքների բացթողում չի իրականացվել։

5. «Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքների մասով ներմուծման մաքսատուրքեր, հարկեր, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքեր վճարելու պարտավորությունը դադարում է սույն հոդվածի 1 եւ 3 կետերում նշված անձանց համար «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքների եւ (կամ) «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների նկատմամբ տիրապետման, օգտագործման եւ (կամ) տնօրինման իրավունքները, սույն Օրենսգրքի 205-րդ հոդվածի 9-րդ եւ 10-րդ կետերին համապատասխան առանց «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողությունը ավարտելու, եթե այդպիսի ապրանքների նկատմամբ տիրապետման, օգտագործման եւ (կամ) տնօրինման իրավունքները փոխանցելիս «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգին համապատասխան ապրանքների օգտագործման պայմանները պահպանելու եւ այդպիսի մաքսային ընթացակարգի գործողությունը ավարտելու հայտարարատուի պարտականությունը վերապահված է այն անձանց, որոնց փոխանցվել են այդ իրավունքները։

6. Ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունը ենթակա է կատարման սույն կետում նշված հանգամանքների ի հայտ գալու դեպքում։

Ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու ժամկետ է համարվում՝

1) «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքները եւ (կամ) «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքները, մինչեւ այդպիսի ապրանքների նկատմամբ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգն ավարտելը, կամ առանց մաքսային մարմնի թույլտվության ԱՏԳ տարածքից սույն Օրենսգրքի 205-րդ հոդվածի 4-րդ կետում նշված դեպքերում արտահանելու դեպքում, բացառությամբ դեպքերի, երբ սույն Օրենսգրքի 207-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի երրորդ եւ չորրորդ պարբերություններով նախատեսված դեպքերում այդպիսի ապրանքները կարող են արտահանվել առանց «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգն ավարտելու՝ ԱՏԳ տարածքից արտահանման օրը, իսկ եթե այդ օրը պարզված չէ, ապա այն օրը, երբ բացահայտվել է այնպիսի ԱՏԳ տարածքից, որտեղ կիրառվում է «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգն, այդպիսի արտահանման փաստը.

2) «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքները եւ (կամ) «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքները, առանց «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելու այլ անձի փոխանցելու դեպքում, բացառությամբ այդպիսի ապրանքները սույն Օրենսգրքի 205-րդ հոդվածի 8-10-րդ կետերին համապատասխան փոխանցելու՝ ապրանքների փոխանցման օրը, իսկ եթե այդ օրը պարզված չէ՝ այդպիսի փոխանցման փաստի բացահայտման օրը.

3) սույն Օրենսգրքի 205-րդ հոդվածի 4-րդ կետի 1-ին, 2-րդ, 4-րդ եւ 5-րդ ենթակետերում նշված դեպքերում ԱՏԳ տարածքից արտահանված ապրանքների՝ մինչեւ սույն Օրենսգրքի 205-րդ հոդվածի 5-րդ կետի առաջին պարբերությանը համապատասխան մաքսային մարմնի կողմից սահմանված ժամկետի ավարտը ԱՏԳ տարածք չվերադարձնելու դեպքում՝ այդ ժամկետը լրանալու օրը.

4) Սույն Օրենսգրքի 205-րդ հոդվածի 4-րդ կետի 3-րդ ենթակետում նշված դեպքում ԱՏԳ տարածքից արտահանված ապրանքների նկատմամբ՝ մինչեւ սույն Օրենսգրքի 205-րդ հոդվածի 5-րդ կետի երկրորդ պարբերությանը համապատասխան մաքսային մարմնի կողմից սահմանված ժամկետի լրանալը «ազատ մաքսային գոտի»

մաքսային ընթացակարգի գործողությունը չավարտելու դեպքում՝ այդ ժամկետը լրանալու օրը.

5) «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքների եւ (կամ) «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների կորստի դեպքում՝ ապրանքների կորստի օրը՝ բացառությամբ վթարի կամ անհաղթահարելի ուժի ազդեցության հետեւանքով այդ ապրանքների ոչնչացման եւ (կամ) անվերադարձ կորստի կամ փոխադրման (տրանսպորտային փոխադրման) եւ (կամ) պահպանման բնականոն պայմաններում բնական կորստի հետեւանքով դրանց անվերադարձ կորստի, իսկ եթե այդ օրը պարզված չէ՝ այդ կորստի փաստը բացահայտելու օրը.

6) սույն Օրենսգրքի 207-րդ հոդվածի 10-րդ կետի 1-ին ենթակետում նշված ապրանքները թաղելու, վնասազերծելու, ուտիլիզացնելու կամ այլ կերպ ոչնչացնելու փաստը հաստատող՝ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան սահմանված փաստաթղթերը մաքսային մարմին վերջինիս կողմից սահմանված ժամկետում չներկայացվելու դեպքում՝ այդ ապրանքներն ԱՏԳ տարածքի սահմաններից դուրս արտահանելու օրը.

7) սույն Օրենսգրքի 207-րդ հոդվածի 5-րդ կետի 2-րդ ենթակետի չորրորդ պարբերությունում նշված ապրանքների նկատմամբ սույն Օրենսգրքի 139-րդ հոդվածի 5-րդ կետի երրորդ պարբերությանը համապատասխան «արտահանում» մաքսային ընթացակարգի գործողությունն դադարելու դեպքում՝ բացառությամբ այն դեպքի, երբ «արտահանում» մաքսային ընթացակարգի գործողությունը դադարում է նշված այն ապրանքների համար, որոնք այդպիսի դադարելու պահին գտնվում են ԱՏԳ տարածքում, սույն Օրենսգրքի 139-րդ հոդվածի 5-րդ կետի առաջին պարբերությամբ սահմանված ժամկետի ավարտի օրվան հաջորդող օրը:

7. «Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքների առնչությամբ սույն հոդվածի 6-րդ կետում նշված հանգամանքների ի հայտ գալու դեպքում ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերը ենթակա են վճարման այնպես,

ինչպես դա կարվեր, եթե այդպիսի օտարերկրյա ապրանքները ձեւակերպված լինեին «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով՝ առանց սակագնային առանձնաշնորհումների եւ ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման արտոնությունների կիրառման:

Եթե սույն հոդվածի 6-րդ կետում նշված հանգամանքներն ի հայտ են եկել «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների առնչությամբ, եւ այդպիսի ապրանքներում սույն Օրենսգրքի 206-րդ հոդվածի համաձայն նույնականացվել են «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքներ, ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը ենթակա են վճարման «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված եւ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների պատրաստման համար օգտագործված օտարերկրյա ապրանքների առնչությամբ այնպես, ինչպես այդպիսի օտարերկրյա ապրանքները ձեւակերպվեին «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով՝ առանց սակագնային առանձնաշնորհումների եւ ներմուծման մաքսատուրքերի վճարման արտոնությունների կիրառման:

Սույն կետի առաջին եւ երկրորդ պարբերություններում նշված դեպքերում ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը հաշվարկվում են՝ ելնելով ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի այն դրույքաչափերից, որոնք գործում են մաքսային մարմնի կողմից ապրանքների այն հայտարարագրի գրանցման օրվա դրությամբ, որը ներկայացվել է «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով այդ ապրանքները ձեւակերպելու համար, իսկ այն ապրանքների առնչությամբ, որոնց բացթողումը, դրանք «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպելիս, իրականացվել է մինչեւ ապրանքների հայտարարագիր ներկայացնելը՝ մինչեւ ապրանքների հայտարարագիր ներկայացնելը մաքսային մարմնի կողմից ապրանքների բացթողման մասին դիմումը գրանցելու օրվա դրությամբ, իսկ եթե «ազատ մաքսային գոտի» մաքսային

ընթացակարգով ապրանքների ձեւակերպումը սույն Օրենսգրքին համապատասխան իրականացվել է առանց մաքսային հայտարարագրման՝ նավահանգստային ԱՏԳ կամ լոգիստիկ ԱՏԳ տարածք ապրանքների ներմուծման օրվա դրությամբ:

8. Եթե սույն հոդվածի 6-րդ կետում նշված հանգամանքներն ի հայտ են եկել «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների առնչությամբ, եւ այդպիսի ապրանքներում սույն Օրենսգրքի 206-րդ հոդվածի համաձայն չեն նույնականացվել «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքներ, ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերը ենթակա են վճարման «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված եւ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների պատրաստման համար օգտագործված օտարերկրյա ապրանքների առնչությամբ այնպես, ինչպես եթե այդպիսի օտարերկրյա ապրանքները ձեւակերպվեին «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով՝ առանց ներմուծման մաքսատուրքերը, հարկերը վճարելու գծով սակագնային առանձնաշնորհումների եւ արտոնությունների կիրառման:

Ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերը հաշվարկվում են սույն Օրենսգրքի 7-րդ եւ 12-րդ գլուխներին համապատասխան՝ էլնելով ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերի այն դրույքաչափերից, որոնք գործում են «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների առնչությամբ սույն հոդվածի 6-րդ կետին համապատասխան ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու ժամկետ հանդիսացող օրվա դրությամբ:

Եթե ապրանքների մաքսային արժեքը որոշելու, ինչպես նաեւ ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերի հաշվարկման համար պահանջվում է արտարժույթը վերահաշվարկել անդամ պետության արժույթով, այդպիսի վերահաշվարկն իրականացվում է սույն հոդվածի 6-

րդ կետին համապատասխան ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերը վճարելու ժամկետ հանդիսացող օրվա դրությամբ գործող փոխարժեքով:

Այն դեպքում, երբ մաքսային մարմինն իր տրամադրության տակ չունի ապրանքների (դրանց բնույթի, անվանման, քանակի, ծագման եւ (կամ) մաքսային արժեքի) մասին ճշգրիտ տեղեկություններ, վճարման ենթակա ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերի հաշվարկման համար բազան որոշվում է մաքսային մարմնի մոտ առկա տեղեկությունների հիման վրա, ապրանքների դասակարգումն իրականացվում է՝ հաշվի առնելով սույն Օրենսգրքի 20-րդ հոդվածի 3-րդ կետը:

Եթե ապրանքի ծածկագիրը Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին համապատասխան սահմանվել է 10-ից պակաս նիշերի քանակով խմբավորման մակարդակով, ապա՝

ներմուծման մաքսատուրքերի հաշվարկման համար կիրառվում է այդ խմբավորման մեջ մտնող ապրանքներին համապատասխանող մաքսատուրքերի դրույքաչափերից ամենամեծը.

հարկերը հաշվարկելու համար կիրառվում է այն խմբավորման մեջ մտնող ապրանքներին համապատասխանող ավելացված արժեքի հարկի դրույքաչափերից ամենամեծը, ակցիզների (ակցիզային հարկի կամ ակցիզային վճարի) դրույքաչափերից ամենամեծը, որի համար սահմանվել է մաքսատուրքերի դրույքաչափերից ամենամեծը.

հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերի հաշվարկման համար կիրառվում է այդ խմբավորման մեջ մտնող ապրանքներին համապատասխանող հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերի դրույքաչափերից ամենամեծը՝ հաշվի առնելով սույն կետի իններորդ պարբերությունը:

Հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերը հաշվարկվում են՝ էլնելով ապրանքների՝ սույն Օրենսգրքի 4-րդ գլխին համապատասխան հաստատված ծագումից եւ (կամ) նշված տուրքերը սահմանելու համար անհրաժեշտ այլ տեղեկություններից: Եթե ապրանքների ծագումը եւ (կամ) նշված տուրքերը

սահմանելու համար անհրաժեշտ այլ տեղեկություններ հաստատված չեն, ապա հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերը հաշվարկվում են՝ հիմք ընդունելով հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերի դրույքաչափերից ամենամեծը, որոնք սահմանվել են Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի նույն ծածկագրին դասվող ապրանքների համար, եթե ապրանքի դասակարգումն իրականացվել է 10 նիշի մակարդակով, կամ խմբավորման մեջ մտնող ապրանքների համար, եթե ապրանքների ծածկագրերը Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին համապատասխան, սահմանվել են 10-ից պակաս նիշերի քանակով խմբավորման մակարդակով:

Ապրանքների մասին ճշգրիտ տեղեկությունները հետագայում պարզվելու դեպքում ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերը հաշվարկվում են՝ ելնելով այդ ճշգրիտ տեղեկություններից, կատարվում է ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերի՝ ավել վճարված եւ (կամ) ավել բռնագանձված գումարների վերադարձ (հաշվանցում) կամ չվճարված գումարների բռնագանձում՝ սույն Օրենսգրքի 10-րդ եւ 11-րդ գլուխներին ու 76-րդ եւ 77-րդ հոդվածներին համապատասխան:

9. Սույն հոդվածի 7-րդ կետին համապատասխան վճարվող (բռնագանձվող) ներմուծման մաքսատուրքերի, հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերի գումարներից պետք է տոկոսներ վճարվեն այնպես, ինչպես եթե նշված գումարների վճարման մասով տրամադրված լինի հետաձգում՝ ապրանքներն «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպելու օրվանից մինչեւ ներմուծման մաքսատուրքերը, հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերը վճարելու ժամկետը լրանալը: Նշված տոկոսները հաշվարկվում եւ վճարվում են սույն Օրենսգրքի 60-րդ հոդվածին համապատասխան:

10. «Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելու կամ սույն Օրենսգրքի 207-րդ հոդվածի 5-րդ կետի 2-րդ ենթակետի չորրորդ պարբերության մեջ նշված «արտահանում» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքները Միության մաքսային տարածքից արտահանման, կամ օտարերկրյա ապրանքների նկատմամբ կիրառելի մաքսային ընթացակարգերով

ապրանքները սույն Օրենսգրքի 129-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան ձեւակերպելու, կամ այդպիսի ապրանքները մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության կատարումից եւ (կամ) դրանց բռնագանձումից հետո (ամբողջությամբ կամ մասամբ) սույն Օրենսգրքի 51-րդ գլխին համապատասխան մաքսային մարմինների կողմից արգելանքի վերցնելու դեպքում՝ սույն հոդվածին համապատասխան վճարված եւ (կամ) բռնագանձված մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերի գումարները ենթակա են վերադարձման (հաշվանցման)՝ սույն Օրենսգրքի 10-րդ գլխին եւ 76-րդ հոդվածին համապատասխան:

Հոդված 209. «Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքների եւ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների նկատմամբ՝ առանձին մաքսային ընթացակարգերով դրանք ձեւակերպելիս ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերի հաշվարկման եւ վճարման առանձնահատկությունները

1. «Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված եւ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված՝ վերամշակման գործողությունների չենթարկված օտարերկրյա ապրանքները «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձեւակերպելիս՝ ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերը հաշվարկվում են՝ ելնելով ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերի դրույքներից, փոխարժեքից, որոնք գործում են՝ մաքսային մարմնի կողմից «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ապրանքները ձեւակերպելու համար ապրանքների

հայտարարագիրը գրանցելու օրվա դրությամբ, իսկ այն ապրանքների նկատմամբ, որոնց բացթողումը «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպելիս իրականացվել է նախքան ապրանքների հայտարարագիրը ներկայացնելը՝ մինչև ապրանքների հայտարարագիր ներկայացնելը՝ ապրանքների բաց թողնման մասին դիմումը մաքսային մարմնի կողմից գրանցելու օրվա դրությամբ՝ բացառությամբ սույն կետի երկրորդ պարբերության մեջ նշված դեպքի:

«Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված, ԱՏԳ ռեզիդենտի (մասնակցի, սուբյեկտի) կողմից շահագործման մեջ դրված եւ օգտագործվող սարքավորումները «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձեւակերպելիս «ԱՏԳ տարածքում գործունեության իրականացման (վարման) մասին» համաձայնագրի (պայմանագրի) («ԱՏԳ-ում գործունեության պայմանների մասին» պայմանագրի, ներդրումային հայտարարագրի, ձեռնարկատիրական ծրագրի) իրագործման, ինչպես նախահանգստային կամ լոգիստիկ ԱՏԳ տարածքում «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքների իրացման համար ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերը հաշվարկվում են՝ էլնելով ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերի դրույքներից, փոխարժեքից, որոնք գործում են «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ապրանքները ձեւակերպելու համար ներկայացված ապրանքների հայտարարագիրը մաքսային մարմնի կողմից գրանցվելու օրվա դրությամբ:

2. «Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքները սույն Օրենսգրքի 127-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 5, 7, 10 եւ 14 ենթակետերում նշված մաքսային ընթացակարգերով ձեւակերպելիս՝

1) նշված ապրանքներում «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքների՝ սույն Օրենսգրքի 206-րդ հոդվածին համապատասխան իրականացվող նույնականացման պայմանի դեպքում, ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերը հաշվարկվում են «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով

ձեռակերպված եւ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեռակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների պատրաստման համար օգտագործված օտարերկրյա ապրանքների նկատմամբ: Ընդ որում, կիրառվում են ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնացման, փոխհատուցման տուրքերի այն դրույքաչափերը, փոխարժեքները, որոնք գործում են մաքսային մարմնի կողմից ապրանքների հայտարարագրի գրանցման օրը, որը ներկայացվել է «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ապրանքները ձեռակերպելու համար, իսկ այն ապրանքների նկատմամբ, որոնց բացթողումը, դրանք «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեռակերպելիս, իրականացվել է մինչեւ ապրանքների հայտարարագիր ներկայացնելը՝ մաքսային մարմնի կողմից ապրանքների բացթողման մասին դիմումը գրանցվելու օրվա դրությամբ.

2) «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեռակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների համար մաքսային մարմնի կողմից հայտարարագրի գրանցման օրվա դրությամբ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեռակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքներում «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեռակերպված օտարերկրյա ապրանքների՝ սույն Օրենսգրքի 206-րդ հոդվածին համապատասխան իրականացվող նույնականացման բացակայության դեպքում, ներմուծման մաքսատուրքերը, հարկերը հաշվարկվում են «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեռակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների նկատմամբ: Ընդ որում, ներմուծման մաքսատուրքերի, հարկերի դրույքաչափերը, փոխարժեքը կիրառվում են մաքսային մարմնի կողմից՝ սույն Օրենսգրքի 127-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 4, 5, 7, 10 եւ 14-րդ ենթակետերում նշված մաքսային ընթացակարգերով ձեռակերպելու նպատակով ներկայացված ապրանքների հայտարարագրի գրանցման օրվա դրությամբ: Աղվալորային դրույքաչափով ներմուծման մաքսատուրքերի հաշվարկման բազան այս դեպքում հանդիսանում է «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեռակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված

(ստացված) ապրանքների հաշվարկային արժեքը, որի որոշման կարգը սահմանվում է Հանձնաժողովի կողմից:

3. «Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների նկատմամբ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելու դեպքում, սույն Օրենսգրքի 207-րդ հոդվածի 7-րդ եւ 8-րդ կետերին համապատասխան, ներմուծման մաքսատուրքերը, հարկերը հաշվարկվում են «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների նկատմամբ: Ընդ որում, ներմուծման մաքսատուրքերի, հարկերի դրույքաչափերը, փոխարժեքը կիրառվում են մաքսային մարմնի կողմից՝ սույն Օրենսգրքի 127-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 4, 5, 7, 10 եւ 14-րդ ենթակետերում նշված մաքսային ընթացակարգերով ձեւակերպելու նպատակով ներկայացված ապրանքների հայտարարագրի գրանցման օրվա դրությամբ:

Հոդված 210. «Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների կարգավիճակը որոշելը

1. Այն դեպքում, երբ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքներն արտահանվում են Միության մաքսային տարածքից, այդպիսի ապրանքների կարգավիճակը որոշվում է ապրանքների բավարար վերամշակման չափանիշներին համապատասխան, որոնք կարող են արտահայտվել՝

1) Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին համապատասխան ապրանքի դասակարգման ծածկագրի փոփոխությամբ՝ առաջին 4 նիշերից ցանկացածի մակարդակով.

2) ապրանքի արժեքի փոփոխությամբ, երբ օգտագործված նյութերի արժեքի տոկոսային բաժինը կամ ավելացված արժեքը հասնում է վերջնական արտադրանքի գնում ներառված հաստատագրված չափին (աղվալորային բաժնի կանոն).

3) անհրաժեշտ պայմանների, արտադրական եւ տեխնոլոգիական այնպիսի գործողությունների իրականացմամբ, որոնք բավարար են ապրանքները որպէս Միության ապրանքներ ճանաչելու համար:

2. «Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքները Միության մաքսային տարածքից արտահանման նպատակներով ճանաչվում են որպէս Միության ապրանքներ, եթէ ապրանքների պատրաստման (ստացման) գործողությունների արդյունքում կատարվում է հետեւյալ պայմաններից մեկը՝

1) տեղի է ունեցել Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին համապատասխան ապրանքի դասակարգման ծածկագրի փոփոխություն՝ առաջին չորս նիշերից ցանկացածի մակարդակով՝ բացառությամբ սույն հոդվածի 3-րդ կետում նշված դեպքերի.

2) «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքների արժեքի տոկոսային բաժինը չի գերազանցում վերջնական արտադրանքի գնի մեջ ներառված հաստատագրված չափը, կամ ավելացված արժեքը հասնում է վերջնական արտադրանքի գնի մեջ ներառված հաստատագրված չափին՝ բացառությամբ սույն հոդվածի 3-րդ կետում նշված դեպքերի.

3) ապրանքների մասով կատարվել են այնպիսի պայմաններ, արտադրական եւ տեխնոլոգիական գործողություններ, որոնք բավարար են «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքները որպէս Միության ապրանքներ ճանաչելու համար՝ բացառությամբ սույն հոդվածի 3-րդ կետի առաջին պարբերության մեջ նշված դեպքի:

3. «Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքները չեն ճանաչվում որպէս Միության ապրանքներ, եթէ ապրանքների մասով կատարվել են միայն այն գործողությունները, որոնք չեն համապատասխանում բավարար վերամշակման չափանիշներին՝ անկախ այլ պայմանների կատարումից:

Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին համապատասխան ապրանքի դասակարգման ծածկագրի փոփոխությունը՝ առաջին չորս նիշերից ցանկացածի մակարդակով, եւ ադվալորային բաժնի կանոնը չեն կիրառվում որպես «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների բավարար վերամշակման չափանիշներ այն դեպքում, երբ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների նկատմամբ սահմանվել է այն պայմանների, արտադրական եւ տեխնոլոգիական գործողությունների ցանկը, որոնք բավարար են «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքները որպես Միության ապրանքներ ճանաչելու համար:

4. Այն պայմանների, արտադրական եւ տեխնոլոգիական գործողությունների ցանկը, որոնք բավարար են «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքները՝ որպես Միության ապրանքներ ճանաչելու համար, ինչպես նաեւ այն գործողությունների ցանկը, որոնց կատարումը, «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների կարգավիճակը որոշելիս, չի համապատասխանում բավարար վերամշակման չափանիշներին, սահմանվում է Հանձնաժողովի կողմից:

5. Ադվալորային բաժնի կանոնը՝ որպես «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների բավարար վերամշակման չափանիշ օգտագործելու կարգ, սահմանվում է Հանձնաժողովի կողմից:

Ադվալորային բաժնի կանոնը Միության ապրանքների վերանորոգման հետ կապված գործողություններ կատարելիս չի կիրառվում որպես բավարար վերամշակման չափանիշ:

6. «Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների

կարգավիճակը սահմանվում է այդպիսի անդամ պետության լիազորված պետական մարմնի կամ կազմակերպության կողմից:

7. Որպես «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների կարգավիճակը հաստատող փաստաթուղթ՝ անդամ պետության լիազորված մարմինը (կազմակերպությունը) տրամադրում է «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքները որպես Միության ապրանքներ ճանաչելու վերաբերյալ եզրակացություն կամ եզրակացություն այն մասին, որ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքները Միության ապրանքներ չեն:

Նշված եզրակացությունների ձեւերը, էլեկտրոնային փաստաթղթերի ձեւով ներկայացվող այդ եզրակացությունների կառուցվածքը եւ ձեւաչափը, դրանք լրացնելու, ինչպես նաեւ դրանց տրամադրման եւ կիրառման կարգը սահմանվում են Հանձնաժողովի կողմից:

8. «Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների կարգավիճակը հաստատող փաստաթղթի բացակայության, չեղյալ կամ անվավեր ճանաչվելու դեպքում «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելիս, այդպիսի ապրանքները, Միության մաքսային տարածքից արտահանելու նպատակով, դիտարկվում են որպես Միության ապրանքներ, իսկ այլ նպատակներով՝ որպես օտարերկրյա ապրանքներ: